

Աշխատանքային խորհրդակցություն կրթության ոլորտի պատասխանատուների մասնակցությամբ

Նոյեմբերի 26-ին Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ խորհրդակցություն Կապանի տարածաշրջանի հանրակրթական դպրոցների տնօրենների և ուսումնական մասով փոխտնօրենների մասնակցությամբ:

Խորհրդակցությունն անցկացնում էր ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության նորանշանակ պետ Հովհիկ Ալեքսանյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին դպրոցների վերանորոգման, գույքով ապահովման, մանկավարժական կադրերով համալրմանը, նաև դպրոցներում <<Պատանի երկրապահ>> ակումբների ստեղծման աշխատանքների ընթացքին առնչվող և մի շարք այլ հարցեր:

Խորհրդակցության ավարտին ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական Վոլոդյա Հովհաննիսյանը, <<Կապանի թիվ 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Մարինե Դավթյանին մատաղ սերնդի դաստիարակության, կրթության կազմակերպման գործում ներդրած ավանդի համար հանձնեց ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագիրը: